600.0339.05.09.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

5 սեպտեմբերի 2018 թվականի N339Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական հաշվետվությունների ձևերը սահմանելու մասին» N527Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ եռամսյակային (տարվա սկզբից՝ աճողական) արդյունքներով ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ն է,

գ) Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103Ն որոշման համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման դեպքում հաշվետվությունների ներկայացման օր է համարվում Հանձնաժողովի առցանց դիմումների և հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հաշվետվություններ ներկայացրած անձին հաշվետվությունների ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան

էլեկտրոնային ծանուցման մեջ նշված օրը կամ փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry)՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված հաշվետվությունների ուղարկման օրը,

դ) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի երկրորդ եռամսյակի (տարվա սկզբից՝ աճողական) արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2018 թվականի օգոստոսի 3-ին,

ե) Հանձնաժողովը Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2018 թվականի օգոստոսի 7-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 7-ի ՈԱԲ-2079Ֆ գրությամբ,

զ) Ընկերությունը 2018 թվականի օգոստոսի 17-ի NE/21/913-18 գրությամբ հայտնել է, որ Հաշվետվությունների ուղեկցող գրությունը փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) Հանձնաժողով է ներկայացրել 2018 թվականի օգոստոսի 1-ին, իսկ Հաշվետվությունները մեծածավալության պատճառով ուղարկվել են փոստային եղանակով՝ 2018 թվականի օգոստոսի 3-ին,

է) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետը: Ինչ վերաբերում է վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացրած հիմնավորմանը, հարկ է փաստել, որ Ընկերությունը 2018 թվականի օգոստոսի 1-ին փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ առանց էլեկտրոնային ստորագրությամբ վավերացման: Հաշվետվությունները փոստային եղանակով Հանձնաժողով են ներկայացվել 2018 թվականի օգոստոսի 3-ին, իսկ մեծածավալ լինելու հանգամանքով պայմանավորված՝ Հաշվետվությունները Որոշմամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու Ընկերության հիմնավորումը օբյեկտիվ պատճառ չի կարող համարվել, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
5 սեպտեմբերի 2018թ.